

Խառը թվերի հանումը

Խառը թվերը հանելու համար

- պետք է համեմատել նվազելիի և հանելիի կոտորակային մասերը
- եթե նվազելիի կոտորակային մասը մեծ է հանելիի կոտորակային մասից, ապա պետք է առանձին-առանձին կատարել ամբողջ մասերի և կոտորակային մասերի հանում և իրար գումարել ստացված արդյունքները:

Օրինակ՝

$$2\frac{3}{6} - 1\frac{2}{6}$$

$$\text{Համեմատենք } \frac{3}{6} > \frac{2}{6}$$

Ուրեմն՝

$$2\frac{3}{6} - 1\frac{2}{6} = (2 - 1) + \left(\frac{3}{6} - \frac{2}{6}\right) = 1 + \frac{1}{6} = 1\frac{1}{6}$$

- եթե նվազելիի կոտորակային մասը փոքր է հանելիի կոտորակային մասից, ապա նվազելիի կոտորակային մասին պետք է ավելացնել 1՝ այն հանելով նրա ամբողջ մասից ու կիրառել նախորդ կանոնը:

Օրինակ`

$$3\frac{1}{6} - 1\frac{5}{6}$$

Համեմատենք $\frac{1}{6} < \frac{5}{6}$

$$\text{Ուրեմն } 3\frac{1}{6} - 1\frac{5}{6} = 2 + 1\frac{1}{6} - 1\frac{5}{6} = 2 + \frac{7}{6} - 1\frac{5}{6} =$$

$$= (2-1) + (\frac{7}{6} - \frac{5}{6}) = 1 + \frac{2}{6} = 1 + \frac{1}{3} = 1\frac{1}{3}$$

Առաջադրանքներ

- Կատարեք խառը թվերի հանում:

$$12\frac{4}{6} - 7\frac{1}{6} =$$

$$2\frac{5}{12} - 1\frac{5}{6} =$$

$$3\frac{23}{24} - 1\frac{3}{4} =$$

$$14\frac{3}{7} - 11\frac{2}{5} =$$

$$12\frac{3}{25} - 6\frac{2}{100} =$$

$$9\frac{2}{11} - 5\frac{2}{3} =$$

$$9\frac{8}{10} - 5\frac{2}{3} =$$

$$20\frac{3}{18} - 1\frac{5}{12} =$$

$$20\frac{3}{36} - 8\frac{7}{24} =$$

- Աստղանիշի փոխարեն ի՞նչ թիվ գրելու դեպքում կստացվի հավասարություն:

$$* + 1\frac{2}{5} = 4\frac{6}{7}$$

$$* + 8\frac{3}{10} = 9\frac{3}{5}$$

$$* + 11\frac{2}{9} = 15\frac{4}{7}$$

- Ուղղանկյան լայնությունը փոքր է նրա երկարությունից $2\frac{2}{9}$ դմ-ով, հաշվեք ուղղանկյան պարագիծը, եթե նրա երկարությունը 6 դմ է: